ԿԻՄԵՐՆԵՐԻ ԵՎ ԿԻՄԵՐԵՐԵՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ ԱՐԴԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ

Կիմերները մեծ դեր են կատարել Առաջավոր Ասիայի մ. թ. ա. VIII—VII դդ. պատմության մեջ։ Կիմերների մասին տեղեկություններ են հաղորդում բավականաչափ աղբյուրներ, սակայն այդ տեղեկությունները համառոտ են, միօրինակ, կցկտուր և հնարավորություն չեն տալիս քիչ թե շատ ամբողջական գաղափար կազմելու նրանց սկզբնական բնակության վայրերի, էթնիկական բնույթի և լեզվական պատկանելության մասին։

Կիմերների՝ հյուսիսսևածովյան մեղ հայտնի ժողովուրդներից հնագույնի[1] սկզբնական բնակավայրը հայտնի է միայն ամենաընդհանուր ձևով. այն ընկած է եղել հյուսիսսևածովյան շրջանում։ Սակայն եղած տեղեկությունների հիման վրա առայժմ հնարավոր չէ ավելի որոշակի սահմաններ նշել։ Հետազոտողները կիմերների բնակության սահմանները մերթ ընդարձակում են՝ ընդգրկելով ողջ հյուսիսսևածովյան շրջանը մինչև Թրակիա, մերթ նեղացնում՝ սահմանափակելով Թամանյան թերակղզու հյուսիսային մասով, հատկապես ներկայիս Ֆոնտան (Ֆանտալովսկի) թերակղզով։ Առաջին դեպքում հավանաբար կիմերների անվան տակ միավորվում են, առանց էթնիկական պատկանելության հստակ տարբերակման, այլևայլ ցեղեր և ցեղախմբեր, երկրորդ դեպքում փորձ է արվում ճշտորոշել բուն կիմերների բնակության վայրը։ Կիմերների անունով մնացած զանազան աշխարհագրական անունները և դրանց տեղադրությունը հարցն արմատապես չեն լուծում, եթե նկատի առնենք հին հեղինակների աղոտ պատկերացումները իրենց երկրից հյուսիս ընկած վայրերի մասին և ուշ փոխանցումների հնարավորությունը։

Կիմերները եղել են քոչվոր ժողովուրդ, լայնորեն զբաղվել են ձիաբուծությամբ և մարտեր են մղել հեծելազորով։ Սրանով էլ բացատրվում են նրանց մեծ շարժունակությունը և մարտական սկզբնական խոշոր հաջողությունները։ Կիմերների քանակի ոչ շատ մեծ լինելը երևում է թեկուզ այն

---

[1] В. Д. Блаватский, Киммерийский вопрос и Пантикапей, «Вестник МГУ», 1948, *էջ 9. Կիմերների մասին հմմտ. նաև* Л. А. Ельницкий, Киммерийцы и киммерийская культура, ВДИ, 1949, № 1, *էջ 14—18*; Ю. С. Крушкол, К вопросу о киммерийцах, «Археология и история Боспора», Симферополь ,1952, *էջ 89—91*; А. А. Нессен, К вопросу о памятниках VIII—VII вв. до н. э. на юге европейской части СССР, «Советская археология», XVIII, 1953, *էջ 100—110*; Е. И. Крупнов, Киммерийцы на Северном Кавказе, «Древние племена и народности Кавказа. Материалы и исследования по археологии СССР», № 68, М.—Л., 1958, *էջ 176—195*; М. И. Артамонов, Киммерийцы и скифы, Л., 1974, *էջ 20—23*; *նույնի՝* Вопрос о происхождении скифов, ВДИ, 1950, № 2, *էջ 41*; Н. А. Лавров, О пути вторжения киммерийцев в Переднюю Азию, «Советская археология», 1965, № 3, *էջ 219—223*; *Ս. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 90—92։*

փաստից, որ մարտական որոշ հաջողություններից հետո նրանք խիստ թուլանում են և հավանաբար շուտով հեռանում պատմական ասպարեզից՝ դադարելով գոյություն ունենալուց որպես ինքնուրույն ժողովուրդ։

Եղած աղբյուրների համադրությունը ցույց է տալիս, որ կիմերները մ. թ. ա. VIII դ. վերջին տասնամյակներում սկյութների ճնշման տակ[2] թողնում են իրենց սկզբնական բնակատեղին և շարժվում հարավ՝ Առաջավոր Ասիա։ Հերոդոտը տեղեկություն է տալիս շարժման արևելյան ուղու մասին. ըստ նրա՝ կիմերները շարժվել են Սև ծովի արևելյան ափերով։ Ստրաբոնը հակված է ընդունելու կիմերների շարժման արևմտյան ուղին՝ Թրակյան Բոսպորով և Բոսֆորի նեղուցով դեպի Էոլիա, Իոնիա, Պափլագոնիա։ Արդի որոշ հետազոտողներ, նկատի ունենալով Սև ծովի արևելյան ափերով ձիավոր քոչվորների մեծ զանգվածի շարժման դժվարությունը, ենթադրում են, որ կիմերները անցել են Անդրկովկաս նախ Դարյալով և Ալագիրով, ապա շարժվել դեպի արևելա-սևծովյան ափերը[3]։ Առաջավոր Ասիայում նշվում է կիմերական երկու հիմնական բնակատեղի՝ Մանա երկիրը Ուրմիա լճի հարավային կողմերում և Կապադովկիան (Դամիրքը)։

Ասուրական աղբյուրները մ. թ. ա. VIII դ. նախավերջին տասնամյակի առաջին կեսին (720—715 թթ. միջև), մինչև Սարգոն II-ի արշավանքը Ուրարտու (714 թ.)[4], տեղեկություններ են տալիս կիմերների, ուրարտացիների հետ նրանց ընդհարման և վերջիններիս պարտության մասին։ Սակայն հետագայում, ինչպես երևում է, կիմերները դաշն են կնքում ուրարտացիների հետ և վտանգ ստեղծում Ասորեստանի համար։ Մ. թ. ա. 679 թ. Տեուշպայի առաջնորդությամբ նրանք ներխուժում են Ասորեստան, բայց պարտություն են կրում։

Արևմուտքում, ըստ Ստրաբոնի՝ Հոմերոսի ժամանակներում կամ ավելի վաղ, կիմերները ասպատակում են գրեթե ողջ Փոքր Ասիան, ընդ որում Ստրաբոնը նրանց նույնացնում է տրերների հետ, որոնք Թրակյան ցեղ են եղել։ Կիմերների հարվածների տակ, հավանաբար ուրարտացիների մասնակցությամբ, մ. թ. ա. 676—674 թթ. ժամանակամիջոցում կործանվում է Փռյուգական պետությունը։ Մ. թ. ա. VII դ. կեսերին կիմերները գրավում են Լիդիան՝ առանց այնտեղ երկար ժամանակով հաստատվելու։ Ընդհարվելով սկյութների հետ և պարտվելով նրանց առաջնորդ Մադիոսից՝ կիմերներն ապաստան են գտնում Փոքր Ասիայի հյուսիսային մասերում՝ Սինոպի մերձակայքում։ Մ. թ. ա. VII դ. վերջերին կիմերները նոր պարտություն են կրում լիդիական թագավոր Ալիատի կողմից և դադարում քաղաքական ուժ ներկայացնելուց։

Կիմերական լեզվական տվյալները արտակարգ սուղ են. մեկ հասարակ անուն, կիմերական ժողովրդի անունն ու նրանից կազմված հատուկ անուն-

---

2 Ըստ Հերոդոտի՝ «երկիրը, որտեղ հիմա բնակվում են սկյութները, նախապես պատկանում էր կիմերներին» (Herod. IV, 11), թեև, իհարկե, չի կարելի խոսել կիմերների և սկյութների բնակության վայրերի սահմանների համընկնելու մասին։ Հմմտ. В. Д. Блаватский, նշվ. աշխ., էջ 10։

3 И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 237։

4 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1946, էջ 296; նույնի՝ Ванское царство, М., 1959, էջ 232 և հտ.։

ները և երեք անձնանուն (կիմերական առաջնորդների անուններ)։ Ահավասիկ դրանք.

1) Հուն. κιμμέριοι (ուշ նաև κιμμεροι) «կիմերներ», այլև Κιμμερίη, Κιμμέρια τείχεια, πορθμητα Κιμμερια, Βοσπορος Κιμμέριος, Κιμμερικόν (քաղաք) և այլն, ակկադ. gamirra, gimmirai, gimirri (բաբել.), եբր. (աստվածաշնչում) Gomer, Gamer, հայ. Գամիրք (Կապադովկիայի հայկական անունը)[5].

2) Հուն. Λυγδαμις, ակկադ. D/Tugdammi- (ᵐTug-dam-mi-ı, ընդ որում mi-ն կարող է ընթերցվել նաև me)[6].

3) Ակկադ. Teušpa.

4) Ակկադ. Sandaksatru (Sa-an-dak-šat-ru, ընդ որում šat(ṭ)d նշանը կարող է ընթերցվել նաև kur, mat/d, lat/d, nat/d, k/gin՝ Sandakkurru և այլն)[7]։

5) Հուն. αργιλλαι «ստորերկրյա բնակարաններ» (հդն.)։

Կարծիք կա, որ kimmer- անվանումը տրվել է կիմերներին ոչ միայն ուրիշների կողմից, այլև եղել է նրանց ինքնանվանումը[8]։ Ըստ տարբեր ուսումնասիրողների՝ այդ անվանումը պահպանվել է վրաց. gmiri «հերոս, հսկա» օս. (վրաց. միջնորդությամբ) goymīri (իրոն.). gumeri, gaemeri (դիգոր.) «հսկա, կուռք», հ. ռուս. коумиръ, коумирь «կուռք» բառերի մեջ[9], ընդ որում օսերենի «կուռք» իմաստը բացատրվում է ռուսերենի ազդեցությամբ անցած եկեղեցական դրքերի թարգմանության միջոցով[10]։

Բացի կիմերների անվան հետ այս կամ այն ձևով առնչվող Կապադովկիայի հին հայկական Գամիրք անունից, որ թերևս կապված է աստվածաշնչի Gamer անվան հետ, կարելի է կապ տեսնել կիմերների և Լենինականի հին Կումայրի (>Գյումրի) անունների միջև, սակայն ավելի շատ հակում կա Կումայրի-ի -այr- բաղադրիչը նույնացնելու հայ. այr «քարայր, քարանձավ» բառի, իսկ Կում-ը՝ Առաջավոր Ասիայի մի շարք տեղանունների kum- բաղադրիչի հետ և վերջինիս ակունքը փնտրելու խուռերենում[11]։ Կումայրի-ի՝ կիմերների անվան հետ կապված լինելը մեզ հավանական է թվում հատկապես այն պատճառով, որ Շիրակ տեղանունը համապատասխանաբար կարող է բացատրվել սարմատական սիրակ (σιρακ =շիրակ) ցեղի[12] (որ

---

5 Ս. Երեմյանը («Հայաստանը ըստ Աշխարհացույց-ի», Երևան, 1963, էջ 46) կիմերների անվան հետ է կապում Կեմերեկ գյուղի անունը, բայց նմանությունը կարող է պատահական լինել (թրք. Կեմերեկ<հայ. Կամարակ. հմմտ. էվերեկ<Ավերակ)։

6 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 240, ծան.։

7 Նույն տեղում, էջ 239։ Կիմերների անվան թյուրքական մեկնության փորձը Շրադերի կողմից (c'omru «նստակյաց քոչվոր») այդ ժամանակաշրջանի համար զուրկ է պատմական հիմքից. հմմտ. M. Vasmer, Untersuchungen über die altesten Wohnsitze der Slaven, I. Die Iranier in Südrußland, Leipzig, 1923, էջ 5. Լուրջ չեն հույների ստուգաբանական բառախաղերը՝ κιμμέριοι—κερβέριοι, κιμμέριοι—χειμέριοι և այլն։

8 Նույն տեղում, էջ 238։

9 В. Миллер, Осетинские этюды, I, М., 1881, էջ 125; В. И. Абаев, Историко-этимологический словарь осетинского языка, I, М.—Л., 1958, էջ 530; М. Фасмер, Этимологический словарь русского языка, II, М., 1967, էջ 416; А. И. Попов, Названия народов СССР, Л.,, 1973, էջ 11։

10 В. И. Абаев, նշվ. աշխ., էջ 238։

11 Г. Капанцян, Хайаса — колыбель армян, Ереван, 1947, էջ 50.

12 Հմմտ. Н. В. Анфимов, Племена Прикубанья в сарматское время, «Советская археология», XVIII, 1952, էջ 63.

մ. թ. ա. III—II դդ. արդեն հաստատվել էր Մանիչ գետի հովտում) անվամբ, եթե կիմերների կազմում կային նաև այս ցեղի ներկայացուցիչներ։ Այս դեպքում կիմերների անվան սկզբնաձևի հնչյունական փոփոխությունը Կումայրի տեղանվան մեջ պետք է համարել կոնտամինացիայի արդյունք։

Կիմերների անվան աղբյուրը հայտնի չէ։ Շատ բան այստեղ կախված է մյուս անունների մեկնությունից, մանավանդ որ կիմեր-ը, ինչպես տեսանք, պատկանված է նաև ɑ- բաղաձայնով և տարբեր ձայնավորումներով։ Պոսեյդոնիոսը կիմերներին նույնացնում է կիմբրերի (κιμβροι) հետ։ Օ. Ն. Տրուբաչովը, ինչպես կտեսնենք, ենթադրում է թրակյան ծագում։

Եթե մի կողմ թողնենք կիմերների մոնղոլական, ֆիննական և կովկասյան ծագման վերաբերյալ վարկածները, որոնք զուրկ են որևէ լուրջ կռվանից, ապա կարելի է հիշել հետևյալ կարծիքները.

1) Ամենից տարածված կարծիքն այն է, որ կիմերները սկյութների նման իրանական ծագում ունեն (ի միջի այլոց, ըստ Կալիմաքոսի՝ կիմերները սկյութների նման «ձի կթողներ» են)։ Այս կարծիքը հենվում է հատկապես Sandıkšatru և Teuspa անունների ստուգաբանության վրա։ Առաջինի համար նշվում է -kšatru «իշխանություն» (=ավ. xsaϑrəm, հ. հնդկ. kśatram, իրան. աղբյուրներից ծագող հայ. աշխարհ) բաղադրիչը. վերջինս ավելի մոտ է, սակայն, հին հնդկական, քան իրանական ձևերին, որոնք k-ի դիմաց ունեն x (=սեպագիր ḫ?)։ Երկրորդի մեջ ուշադրություն է գրավում -spa-ն, որ կարող է արտացոլել իրանական անունների -asp- «ձի» բաղադրիչը։ Ֆ. Յուստին առանց վարանման երկուսն էլ դնում է իրանական անձնանունների շարքը՝ առաջինը մեկնելով որպես Senda-xsaϑra «գոհացուցիչ (պատշաճ) իշխանություն ունեցող» (հմմտ. ավ. senda-), երկրորդը նույնացնելով Հերոդոտի գրքում հիշատակված իրան.> հուն. Τεισπης (=բեհիսթունյան արձանագրության Čaišpiš, Աքեմենի որդու անունը), Τεασπις անձնանվան հետ[13]։ Sandakšatru անձնանվան «զուտ» իրանական մեկնության դեմ բերվում է երկու ապացույց. ա) Sand- բաղադրիչը զուգահեռներ ունի փոքրասիական հատուկ անուններում. նույն ժամանակների ասուրական աղբյուրները հիշատակում են կիլիկյան Sandasarma և Sanduarri անձնանունները, որոնց Sand(a)- բաղադրիչը նույնացվում է Սանդոն դիցանվան հետ[14]. ավելորդ չէ հիշել, որ շատ հետազոտողներ կապ են տեսնում Սանդոն (Շանդոն) աստծու անվան և հայ. շանդ (շանթ) բառերի միջև. բ) նշվում է šat(ṭ)d-ի

---

[13] F. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895, էջ 152։ Մ. Ֆասմերը („Untersuchungen...", էջ 5) նշում է երկու ընդունելի զուգահեռ՝ հ. հնդկ. candra- «լուսավոր» կամ cănta- «հանգիստ» (իրան. *sānta-) բառերի իրանական հնարավոր համարժեքները՝ ճիշտ չհամարելով Լեման-Հաուպտի վերականգնած zantu-χsaϑrva, zantav- «երկրամաս, մարզ» (հմմտ. C. F. Lehmann-Haupt, Kimmerier, „Paulys Real-Encyclopadie der Altertumswissenschaften, XXI, 1) և Մարկվարտի վերականգնած s(p)əntaxsaϑra- (J. Marquart, Untersuchungen zur Geschichte von Eran, I, Göttingen, 1896, II, Leipzig. 1905, „Philologus") ձևերը (p-ի անկում ենթադրելը այդքան վաղ շրջանի համար կասկածելի է համարում)։ Teuspa-ի հիշյալ մեկնությունն էլ նա կեղծ է համարում՝ նշելով, որ č-ն tով կարող է արտահայտվել հունարենում, բայց ոչ ասուրերենում, որտեղ այն կարտահայտվեր š-ով։

[14] И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 210։ Գ. Շրամը („Nordpontische Strome", Göttingen, 1973) նշում է, առանց հարաբերությունը ճշտելու, սեմովյան Σανδαζεου (սեռ. հ.) անձնանունը՝ անհավանական համարելով ավեստ. sand- «կատարել» բայի հետ Լ. Զգուստայի (L. Zgusta, Die Personennamen griechischer Städte der nordlichen Schwarzmeerküste, Prag, 1955, էջ 203) կատարած համեմատությունը։

kur և այլն և, հետևաբար, Sandakšatru-ի Sandakurri և այլն ընթերցումների հնարավորությունը։ Teuspā-ի հիշյալ մեկնության կողքին Յ. Մարկվարտը[15] և Ի. Մ. Դյակոնովը[16] հնարավոր են համարում վերականգնել իրանական Tavaspa- «հզորաձի» նախաձևը (tava- «հզորություն» և aspa- «ձի»), բայց այս դեպքում էլ անբացատրելի է մնում -e- ձայնավորումը[17]։ Կիմերական մյուս անձնանուններից Dugdamiš-ը ևս կապվում է իրանական աղբյուրի՝ Զրադաշտի մոր անվան՝ Duγdo-vā-ի մեջ պահպանված Duγda-ի հետ, բայց այս դեպքում նկատի չի առնվում հուն. Δυγδαμις տարբերակը (*dl նախնական հնչյունի երկտիպ արտացոլում), որ հայտնի է նաև այլուր և կարող է փոքրասիական ծագում ունենալ[18]։ Կիմերների անվան որևէ իրանական մեկնության փորձ մեզ հայտնի չէ։ Կիմերների իրանական ծագման վարկածի դեմ բերվող գլխավոր ապացույցն այն է, որ պահպանված միակ հասարակ անունը իրանական հավաստի զուգահեռներ չունի։ Մ. Ֆասմերը գտնում է, որ հիշյալ անձնանունների իրանական ծագումը հավաստելը խոսում է միայն իշխողների՝ իրանական անուններ կրելու, բայց դեռևս ոչ կիմերների և նրանց լեզվի իրանական ծագման մասին[19]։ Ի. Մ. Դյակոնովը կիմերներին համարում է իրանական ժողովուրդ, բայց VII դ. ենթարկված փոքրասիական նշանակալից ազդեցության։ Նա, միաժամանակ, բավարար հիմքեր չի տեսնում կիմերներին ծագմամբ թրակացիների հետ կապելու համար[20]։

2) Նախկինում առաջ քաշվել և վերջին ժամանակներում վերարծարծվել է կիմերների թրակյան ծագման վարկածը։ Այն պաշտպանողները (հատկապես Օ. Ն. Տրուբաչովը) բերում են երեք կարգի ապացույցներ՝ պատմական, աշխարհագրական և լեզվական[21]։ Պատմական առումով կարևոր է համարվում անտիկ աշխարհի ավանդույթը կիմերների և թրակացի-տրերների կապի մասին[22]։ Աշխարհագրական առումով նշվում է կիմերների՝ ասիական Բոսպորում գտնվելու և սինգերից ու մեոտներից բնականորեն սահմանազատված լինելու փաստը, որ խանգարում է կիմերների իրանական ծագման վարկածին։ Վերջապես լեզվական առումով նշվում է հատկապես նրանց ինքնանվանումը թրակյան լեզվական նյութի հիման վրա բացատրելու հնարավորու-

15 J. Marquart, Untersuchungen..., էջ 206, ծան.։

16 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 240։

17 M. Vasmer, նշվ. աշխ., էջ 6։

18 Ըստ Մ. Ֆասմերի, նշվ. աշխ., էջ 5։ Յ. Մարկվարտը այն մեկնում է ինչպես իրան. Duγdamaēši- «կթոչխարավոր, կթվող ոչխար ունեցող» (հմմտ. ավեստ. Dau-ramaēsi «զեր ոչխար ունեցող»)։ Լեման-Հաուպտը նշում է այս անունը կրող երեք անձ՝ Նաքսոսից, Կնոսոսից և Սիրակուզայից։ Մ. Ֆասմերը (նշվ. աշխ., էջ 5) բերում է Սունդվալի հիշած Λυγδαμον տեղանունը (Միսիայում)։ Վ. Ի. Աբաևը (В. И. Абаев, Скифо-европейские изоглоссы, М., 1963, էջ 136) մեկնում է օս. tux-domæg «ուժով սանձող» բառով՝ միաժամանակ բերելով Յ. Հարմատայի կարծիքը կիմերների իշխող խավի իրանական ծագման մասին (J. Harmatta, Le problème cimmérien, „Arxaeologiai Ertesiö", 7—9, 1946—1948, էջ 131).

19 M. Vasmer, նշվ. աշխ., էջ 7։

20 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 241։

21 О. Н. Трубачев, Temarundam «matrem maris». К вопросу о языке индоевропейского населения Приазовья. «Античная балканистика 2», М., 1975, էջ 41—42. Նույնի՝ О синдах и их языке, «Вопросы языкознания», 1976, 4, էջ 40—41։

22 Ի. Մ. Դյակոնովը (նշվ. աշխ., էջ 234) Ստրաբոնի այս տեղեկությունը համարում է անրավարար իրազեկության արդյունք։

թյունը (ըստ Տրուբաչովի՝ Κιμμέριοι < թրակ. *kir(s)-mar-io- «սևծովյաններ»)[23], այլև պահպանված միակ հասարակ անվան (գլոսայի՝ ἀργιλλαι բառի, ակընհայտ բալկանյան՝ մակեդոնա-թրակյան բնույթը[24]։ Ի միջի այլոց նշենք, որ Լ. Զգուստան (նշվ. աշխ., §§ 571—581) հյուսիսսևծովյան անձնանուններին նվիրված իր աշխատության մեջ մեկ տասնյակից ավելի անձնանունների համար ենթադրում է կիմերական աղբյուր, թեև կասկածով (այդ անձնանունները կրող այլ էթնիկական տարր այս վայրերում նա չի գտնում)՝ Σαλα, Σειταλκης, Σεύθη, Σισος, Σκιλουρος, Ταρουλος, Χαιαις, Ανοπτηνις, Δροβολουι, Σκοζος (այս անձնանունը Մարկվարտը կապում է սկյութների անվան հետ, որ Ֆասմերը ժխտում է)։

3) Վերջապես, գերմանացի գիտնական Գ. Շրամը վերջերս հանդես է եկել այն յուրահատուկ տեսակետով, որ կիմերերենը մոտ է հին հայերենին և նույնիսկ նրա վաղ նախավիճակն է։ Շրամը փաստորեն հենվում է միայն աշխարհագրական սակավաթիվ հատուկ անունների մեկնության վրա, ընդ որում նա ենթադրում է դրանց մեջ բաղաձայնների այնպիսի տեղաշարժ, ինչպես հայերենում։ Ըստ Օ. Տրուբաչովի, Շրամն ունի կիմերների զբաղեցրած տարածության վերաբերյալ ոչ հստակ պատկերացում, խիստ ընդլայնում է կիմերների տարածման շրջանը և ընդգրկում աշխարհագրական այնպիսի անուններ, որոնք պատկանում են էթնիկական այլ միջավայրերի։ Գ. Շրամը Դոնի հին Τάναϊς և Կուբանի հին Ἴτανις[25] անունները վերագրում է կիմերների լեզվին և նրանց մեջ տեսնում բաղաձայնների տեղաշարժ՝ *Kūbhani- > *Kŭbăni- > K(h)upani- և *Danoui- (*Danaui-) > Tanaui-։ Հատկանշական է, որ Շրամը կիմերերենի մնացորդները հայերենով ստուգա-

---

23 Տրուբաչովը այս դեպքում հաշվի չի առնում հետևյալը. 1) թրակերենին ևս հատուկ է բաղաձայնների տեղաշարժը, և հ.-ե *k-ից ծագող թրակյան kh-ն կարող էր նշանակվել հուն. χ-ով, որովհետև նախ՝ շնչեղությունը հունականից ավելի թույլ էր, և երկրորդ՝ մ. թ. ա. III դ. հուն. φ, υ, χ-ն արդեն շփականացել էին (հմմտ. D. Detschew, Charakteristik der thrakischen Sprache, „Балканско езикознание", II, 1960, 149. 2) կիմերների անվան k-ն այլուր արտահայտված է նաև g-ով, որ ցույց է տալիս k-ի kh հնչված լինելու վարկածի անհավանականությունը. 3) հ.-ե. kers-ը այլուր ներկայացված է ոչ թե kirs-, այլ kris- ձևով. հմմտ. Κρισος գետանունը, որտեղ k-ն տրված է χ-ով և ոչ χ-ով, որովհետև գտնվում է այլ բաղաձայնից առաջ (հմմտ. D. Detschew, նշվ. աշխ., էջ 150)։

24 Տրուբաչովը («Вопросы языкознания», 1976, 4, էջ 40, ծան. 4) նշում է միայն Հեսիքիոսի ἀργελλαοικημα μακεδονικον («մակեդոնական բնակարան»), այլ. ragal(e) «խոր-ճիթ» և ռում. argea՝ «հյուղ, գետնափոր տուն» զուգահեռները։ Հմմտ. նաև թրակ. Ἄργιλος քաղաքանունը, որ Αργαιος անձնանվան և Αργι-δαυα տեղանվան Αργι- բաղադրիչի հետ միասին Դ. Դեչևը (D. Detschew, Die trakischen Sprachreste, Wien, 1957, էջ 23) բխեցնում է հ.-ե. *ar(e)k- «փակել» արմատից՝ համեմատելով լատ. arx «ամրոց», arceō «փակել, ներփակել», հայ. արգել բառերի հետ. Նա դժվար բացատրելի է համարում միայն *k-ի դիմաց թրակ. γ-ի առկայությունը։ Սակայն կա նաև *ar(e)g- զուգահեռ արմատը (J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, Bern und München, 1959, էջ 64), որից բխեցվում են մակեդ., ալբ. (< մակեդ.) ու կիմերական հիշյալ բառերը, և որից թերևս ծագում է թրակյան արմատը։ Կիմերների անվան տրուբաչովյան մեկնության դեպքում ժխտվում է Temarunda բառի կիմերյան (այլև խեթյան, իրանական) ծագումը, եթե վերջինս նշանակում է tem- «մութ սև» + arun «ծով» (հմմտ. խեթ. aruna-) + -d(h)ā < *dhē- «սնել (կրծքով), կաթ տալ, ծծեցնել» (ըստ Պլինիոսի Temarunda-ն սկյութների լեզվով նշանակում է matrem maris «մայր ծովու»)։

25 Այս անվանումը միջին դարերում հանդիպում է Cuphis, Κωφινα (հայց. հ.), Κουφης ձևերով և համեմատվում է Քաբուլ գետի հին Κωφης, Κωφήν անվան հետ։

բանելու ոչ մի փորձ չի անում և նկատի չի առնում, որ բաղաձայնների տեղաշարժը հատուկ է ոչ միայն հայերենին[26]։ Հայերենի՝ տրերերենից ծագելու հնարավորության մասին ավելի վաղ (1963 թ.) խոսել է Է. Կավենյակը[27]։

Ի՞նչ կարելի է ասել կիմերների լեզվի մասին եղած տվյալների համադրության հիման վրա։

1) Եղած տվյալները ակնհայտորեն անբավարար են կիմերների մասին քիչ թե շատ վստահելի եզրակացություններ անելու համար։ Հին հեղինակները աղոտ գաղափար են ունեցել կիմերների լեզվի, էթնիկական կազմի ու աշխարհագրական տեղադրման մասին, և նրանց տեղեկությունները կարելի է ընդունել միայն վերապահորեն, մանավանդ որ կիմերները շփոթվել են մերթ տրերների (թրակյան ցեղ), մերթ սկյութների հետ։ Պետք է կարծել, որ նախ՝ սկզբնապես կիմերները հյուսիսսևծովյան վայրերի հիմնական բնակիչները չեն եղել, երկրորդ՝ դաշնակից են եղել թրակյան տրերներին կամ ընդհանրապես ներկայացրել են տարալեզու ցեղախումբ, երրորդ՝ անկախ էթնիկական կազմից, ունեցել են, բացի բուն կիմերական անձնանուններից, նաև այլ ծագման անձնանուններ։ Կարելի է նույնիսկ ենթադրել, որ կիմերների մի հատված (տրերնե՞րը) շարժվել է Առաջավոր Ասիա Ստրաբոնի, իսկ բուն զանգվածը՝ հիմնականում Հերոդոտի նշած ուղիով, ընդ որում հետագայում նրանք արևմուտքում կարող էին վերամիավորվել պատերազմական գործողությունների ժամանակ։ Կիմերների՝ Մանայում գտնվելու փաստը խոսում է նույնիսկ նրանց շարժման երրորդ ուղու՝ այժմյան Ադրբեջանի տերիտորիայով հարավ շարժվելու հնարավորության մասին։ Ստրաբոնի կողմից որպես տրերների առաջնորդ հիշատակված Κωβός-ը իրոք բուն թրակյան անձնանուն է և չի կարող մտցվել բուն կիմերական անձնանունների շարքը։

2) Եթե մի կողմ թողնենք Sandakšatru անձնանվան Sandakkurru և այլ ընթերցումները, որոնք քիչ հավանական են, ապա կարելի է ասել, որ ավելի համոզիչ է պահպանված կիմերական անձնանունների մեծ մասի արիական (հնդիրանական) մեկնությունը. Sandaksatru-ն և Teuspa-ն, թերևս նաև Dugdamiš-ը կարող են գոհացուցիչ կերպով բացատրվել հնդիրանական հողի վրա։ Եթե դրանք չեն խոսում կիմերների արիական ծագման մասին, ապա գոնե վկայում են նրանց՝ հնդիրանական ծագման վերնախավ ունենալու փաստը։ Մինչդեռ կիմերերենի մնացորդները ամբողջապես թրակյան հողի վրա բացատրելու փորձերը առայժմ արդյունավետ չեն։ Ճիշտ է, Sanda-ի համար կարելի է նշել թրակյան որոշակի զուգահեռներ, բայց

---

26 Գրքի վերջում Շրամը, որպես հիմնադրույթ, գրում է. «Ս լեզվի, այն է՝ ենթադրվող կիմերերենի համար արտացոլված հնչապատմական հատկանիշները լիովին համապատասխանում են նաև հայերենին։ Միակ շեղումը՝ հայ. k'-ի և ''Ս՝ռանս-ի նախաձայն h-ի համապատասխանության անճշտությունը կարող է հույների կամ կարերի մեղքը համարվել, որոնք Կուրանի անունը փոխ են առել։ Նաև պատմական տվյալների համաձայն լիովին հավանական է, որ մ. թ. ա. VIII դարում Սև ծովի հյուսիսային ափերից Առաջավոր Ասիա քշված կիմերները, որոնց հետքերը մ. թ. ա. շուրջ 600 թ. կորչում են, և հայերը, որոնք հենց նույն ժամանակ կործանվող կամ մեղացիների կողմից նվաճված ուրարտական պետությունը ներխուժեցին, միևնույն ժողովուրդն են։

27 E. Cavaignac, L'origine des Arméniens, „Revue hittite et asianique", XXI, 72, 1963, էջ 47–51. Հմմտ. նաև И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 207։

նախ՝ դրանք ակնհայտորեն փոքրասիական բնույթի են (հմմտ. թրակ. Σανδανος գետանունը, որի համար Դ. Դեչևը նշում է լիդ. Σανδανις և կիլիկ. Σανδακος անձնանունները, լիդ. Σανδαινα տեղանունը, կար. Sandalion կղզանունը, այլև թրակ. Σανταβινθος անձնանունը և հունականացված Ξανδ(ι)οι ցեղանունը[28]), երկրորդ՝ բոլոր դեպքերում Sanda(a)-ն չի կարելի կտրել -kšatru-ից, և եթե վերջինս ճիշտ է ընթերցվում, ապա Sanda(a)-ն նույնպես պետք է բացատրել հնդիրանական հողի վրա: Կիմերների էթնիկական անվան թրակյան մեկնությունը քիչ է համոզիչ, իսկ ἀργιλλαι-ի զուտ թրակյան բնույթ ունենալու տեսակետը կասկածելի է:

Պետք է հատկապես նշել կիմերական լեզվական մնացորդներից մի քանիսի զգալի մերձավորությունը հին հնդկական բառերին, մանավանդ եթե ընդունենք սինդերի հնդկական ծագման վարկածը[29]. ա) կիմեր. ἀργιλλαι և հ. հնդկ. argala-, -ā զուգահեռի առկայությունը, որի համար առայժմ հայտնի չէ իրանական զուգահեռ. բ) Sandakšatru-ի -kšatru բաղադրիչի՝ հնդկականին ավելի մոտ ձևը. հմմտ. հ. հնդկ. kśatram «իշխանություն, զորություն»՝ ավեստ. xšaϑrəm, հ. պրսկ. hšaśam ձևերի դիմաց. այս դեպքում Sanda-ի համար ևս կարելի է նշել հ. հնդկ. ծագում. հմմտ. Ṡanda և Ṡānda անձնանունները, այլև šānta- «հանգիստ, անխռով» և shandha «ներքինի» բառերը. գ) Dugdamiš անունը, հատկապես նրա dugda- բաղադրիչը հին հնդկերենով բացատրելու հնարավորությունը. հմմտ. հ. հնդկ. dugdhá- «կթված»: Սրանց հակառակ՝ որոշակի հնդկական զուգահեռներ չունեն կիմերների անունը և Teuspa-ն: Վերջինս ավելի շուտ իրանական կերպարանք ունի:

3) Կիմերների լեզվի մնացորդների համեմատությունը հայերենի հետ առայժմ քիչ արդյունավետ է. հավանական թվացող զուգահեռները մասամբ բուն կիմերական կամ բուն հայկական չեն, մասամբ կասկածելի են, մասամբ հավասարապես կարող են մեկնաբանվել ոչ հայկական զուգահեռներով: Այսպես, կիմեր. ἄργιλλα «ստորգետնյա բնակարան» բառը հավասար հավանականությամբ կարող է համեմատվել ինչպես հայ. արգել բառի[30], այնպես էլ թրակյան Ἄργιλος, մակեդոնական ἀργελλα, ալբանական ragal(ε) համիմաստ բառերի հետ. առաջին դեպքում այն կբխի հ.-ե. *ar(e)k-ից՝ հայերենին հատուկ *rk>rգ հնչյունափոխությամբ, երկրորդ դեպքում՝ հ.-ե. *ar(e)g-ից: Եթե կիմերերենը իրոք արիական լեզու է, ապա հավանական է երկրորդ ենթադրությունը, և կիմեր. ἄργιλλα-ն կարելի է համեմատել նույն արմատից ծագող հ. հնդկ. argala-, argala «սողնակ, պարզունակ, նիգ» բառի հետ, որ թերևս կարող էր ունենալ իրան. զուգահեռ ձև՝ շեղվող իմաստով: Քիչ հավանական են ինչպես կիմերների անվան համեմատությունը հայ. կիմիր–ական բառի հետ (երկնքի յոթ գոտիներից մեկը՝ ըստ Ա. Շիրակացու), այնպես էլ Sandakšatru-ի Sandakkurru ընթերցմամբ այն կապելը

[28] D. Detschew. նշվ. աշխ., էջ 240, 333, 421:

[29] P. Kretschmer, Inder am Kuban, „Anzeiger d. Akad. d. Wiss. in Wien. Phil.-hist. Kl“, 80. Jg., 1943 (1944), I—XV, էջ 35—42. О. Н. Трубачев, О синдах и их языке, «Вопросы языкознания», 1976, 4, էջ 44—63.

[30] Ի միջի այլոց, այս բառն ունի նաև «բանտ» իմաստը, որ մոտ է կիմերականին, և նրա մեջ -ել-ը մասնիկ է (հմմտ. բրբռ. բարգ բառը. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, I[2], էջ 304):

Հայ շանդ, շանթ *և* կուռ (կռել, կուռ-*ք*), կուր (=կեր) կուռն *բառերի հետ. շանդ-ի հոլովումը ցույց է տալիս -*i-*ով և ոչ -*a-*ով հիմք. նշենք, որ* կուռ-*ը Հ. Աճառյանը համարում է ուրարտական փոխառություն, իսկ* կուր-*ը և թերևս* կուռն-*ը բնիկ հնդեվրոպական են* (*gu̯ōr- > կուր, *gur-no- > կուռ-*ն)*[31]*։ Կարելի էր կարծել, որ Կուբանի անվան բաղաձայնական տեղաշարժի ենթարկված Ὕπανις ձևում սպասված* kh-*ի դիմաց* h-*ի առկայությունը ոչ թե հույների կամ կարերի մեղքն է, ինչպես ենթադրում է Շրամը, այլ թերևս հայերեն* հուպ (*հմմտ. բբռ.* հուպ տալ, հուպ անել *և այլն) արմատի հետ կոնտամինացիայի ենթարկվելու արդյունք. սակայն այս ենթադրությունը խախտվում է, երբ նկատի ենք առնում, որ բաղաձայնների նման տեղաշարժի ենթարկվել է նաև թրակերենը, և որ սրան վերագրվող Ὕπ(π)ιος գետանվան արմատը բխեցվում է նույն* *ub- *արմատից, ինչ հայերեն* հուպ-*ը, և որ այն հավասարապես կարող էր հիմք տալ համատիպ կոնտամինացիայի համար։* Teuspa *անունը կարող էր մեկնաբանվել հայերենի հնչյունական օրենքներով ինչպես «աստվածապահ»՝* Teus- < *հ.-ե.* *dıu̯os (*dıēus *«աստված» բառի սեռականը) և* -pâ < *pa- *«պահել, սնել, արածացնել», սակայն նման մեկնություն հնարավոր է նաև թրակերենի հողի վրա (հմմտ. առաջին բաղադրիչի համար թրակյան հունականացված* Διος- *բաղադրիչի կողքին տեղաշարժի ենթարկված* τια *և* Tius *ձևերը)։ Հատկանշական է, որ Լ. Ջգուստայի կողմից որպես կիմերական առանձնացված հիշյալ տասնմեկ անձնանուններից ոչ մեկը հավաստի հայկական զուգահեռ չունի։ Կիմերների «հայկականության» վարկածի դեմ է խոսում նաև այն փաստը, որ կիմերական* Dugdami- (Λύγδαμις) *անձնանունը ընդհանրապես հայկական կերպարանք չունի. ինչպես ցույց է տրված մեր «Հնդեվրոպական բաղաձայնների խմբերի արտացոլումը» հոդվածում («Հանդես ամսօրյա», 1976), հայերենը չէր կարող այդ շրջանում ունենալ պայթական բաղաձայնով վերջացող վանկ, մանավանդ որ* u-*ից հետո հայերենում տեղի է ունենում լրացուցիչ քմայնացում՝* gh > à, g > ð, k > u *հետագա անցումներով. հմմտ. օրինակ* *dhugəter > *dhukter > դուստր:

Հետաքրքրական է նշել, որ աստվածաշնչում՝ Եզեկիելի մարգարեության մեջ, որի գրվելու ժամանակը դնում են մ. թ. ա. 593—571 թթ. միջև, Գոմերը (=կիմերներ) և Թոգարման (=հայերը) հիշատակվում են կողք-կողքի՝ առանձին։ Այսպես էլ Դարեհ I-ի Բիհիսթունյան արձանագրության մեջ (մ. թ. ա. 522—521 թթ. դեպքերի նկարագրությունը) կիմերները (որոնց անվան տակ նկատի են առնվում սկյութները) և արմենները (Արմինա=Ուրարտու, Ուրաշտու), նշվում են իրարից անկախ։

Այսուամենայնիվ, հայերի և կիմերների փոխհարաբերության հարցի քննությունը չի կարելի սրանով սպառված համարել։ Շրամի վարկածը անընդունելի համարելով հանդերձ՝ չի կարելի մոռանալ, որ կիմերները, հավանաբար հանդես եկած լինելով որպես հայ ժողովրդի բաղադրատարր, պետք է զգալի հետքեր թողած լինեն հայերենի և հայկական տոպոնոմաստիկայի մեջ, որոնց հետազոտությունը պետք է լինի հայ պատմագիտության և լեզվաբանության առաջիկա խնդիրներից մեկը։

---

31 *Հետաքրքրական է նշել, որ Ստեփանոս Բյուզանդացին (ինչպես և Եվստաթիոսը) Պանտիկապեոնը* (Παντικάπεον) *հիմնադրված է համարում ոչ թե միլետցիների (ինչպես նշում են Ստրաբոնը, Պլինիոսը, Ամիանոսը), այլ կողքերի թագավոր Այետոսի* (Αἰήτος) *որդու կողմից*

ПРОБЛЕМА КИММЕРИЙЦЕВ И КИММЕРИЙСКОГО ЯЗЫКА В СОВРЕМЕННОЙ НАУКЕ

Академик АН АрмССР Г. Б. ДЖАУКЯН

(Резюме)

Из-за скудости материала и возможности различного толкования исторических сведений мнения об этнической принадлежности киммерийцев весьма противоречивы. Наиболее распространенными являются гипотезы об иранском и фракийском их происхождении. В 1973 г. немецкий ученый Г. Шрамм выступил с гипотезой о киммерийцах как о предках армян. Рассмотрев аргументы Г. Шрамма и подвергнув детальному анализу весь доступный материал, мы отвергаем эту гипотезу и считаем возможным говорить лишь об участии киммерийского компонента в образовании армянской народности.